



**ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՒՆԻ 100-ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի մարզային միջոցառումների ծրագրի շրջանակներում Արամուս համայնքում տեղի է ունեցել Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշակոթողի բացման արարողություն, որին մասնակցել են ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլյանը, մարզպետարանի պաշտոնատար անձինք, ինչպես նաև մի շարք քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարներ:

Կոտայքի մարզպետի և Արամուս համայնքի ղեկավարի կողմից խաչքարը բացելու հանդիսավոր արարողությունից հետո հուշակոթողն օծվել է Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանի ձեռամբ:

Այնուհետև մարզպետ Կ. Գուլյանը մասնակցել է Արամուսի Սուրբ Հակոբ Եկեղեցում տեղի ունեցած մոմավառությանը:

Հիշյալ միջոցառմանը հաջորդել է Արամուս համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ իրականացված մատաղի արարողությունը:

Արամուս համայնքում Հայոց Մեծ Եղեռնի զոհերի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շարքն ամփոփվել է տեղի միջնակարգ դպրոցի սաների մասնակցությամբ իրականացված բեմական ներկայացմամբ: